ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ. ԱՊՐԻԼ 15, 1895. ԹԻՒ 7 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 94

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St., New York, N. Y. Vol. V, 1895

ՀԱՐՍՏԱՀԱՐԵԱԼ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՔ

Armenian rebels who would not pay taxes

(Արտատպեալ The ARMENIAN CRISISէն)

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆԻ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Հարստահարեալ Հայ Գիւղացւոց— Քաղաքական Ոգին Հայոց մէջ և Հայաստանի ապագայն.— Արհաւիրք Արհաւրաց ի Սասուն —Հայկական Խնդրոյ Լուծումն ըստ Մս.նչէսթրը Կարտեռնի.— Նամակ Եգիպտոսէն — Նամակ Կովկասէն.— Նամակ Շիքակոյէն։— Նամակ ի Ֆիլատէլֆիոյ.— Նոր հրատարակութիւն.— Այլ և Այլք։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԳԻՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՅՆ

Ա.

Տիեզերական Պատմութեան իմաստասիրութիւնն, քաղաքական տեսակետէ, կ'ընծայէ մի մեծ դաս՝ որոյ վերայ կը բաղձամք՝ հետեւելով քաղաքական գիտութեան ծանօթ վարդապետներու՝ հրաւիրել մերայնոց խորին ուշադրութիւնն իբրեւ մի այնպիսի եզրակացութեան վերայ որ պարտի ուղեցոյց լինիլ մեր ազգային գործունէութեան։

Ամեն ժողովուրդ նոյն չափով ընդունակ չէ քաղաքական կազմակերպութեան։ Քաղաքակիրթ ազգաց մէջ այդ նկատմամբ խորին տարբերութիւններ կան։ Ափրիկեան և Ասիական հնագոյն քաղաքակրթութեան կեդրոններն, Եգիպտոս, Բաբելոն, Ասորեստան, Պաղեստին, Հայաստան ներկայացուցին աստուածպետական կամ բռնապետական կազմակերպութիւններ մի-այն։ Ինքնակալի կամքն էր օրէնք, կամ ի վեր քան զօրէնս, և նորա ոյժ անսահման էր իւր հպատակաց վերայ, որք անհատական ազատութեան ստուերն անգամ չէին տեսներ։ Պարսկայինն, արդարև, հիմնեալ ի Մեծէն Կիւրոսէ, նուազ երկաթեայ բռնապետութիւն մ'էր, սակայն ասիականաց քան զամենայն զարգացեալքն իսկ չզօրեցին բարձրանալ բռնապետութեան աստիճանէն վեր։

Քաղաքական աւելի բարձր կարգի հաստատութիւններն ստեղծուած են յԵւրոպա, բայց և անդ՝ ոչ ամեն ցեղի չնորհիւ։ Կեղտականք և Սլաւականք անընդունակ գտնուած են բարձր կազմակերպութեան։ Նոքա պետերու սքանչացող և հետեւող եղած, հետևապէս անհամար փոքրիկ զինուորական պետութեանց բաժնուած են, և ուստի, հակառակ իրենց քաջ և պատերազմիկ ոգւոյն, վերջապէս ենթարկուած են ուրիշ ցեղերու տիրապետութեան։

Նոյն իսկ համօրէն ազգաց ու ազանց վեհագոյնն, իմաստասիրութեան և գեղարուեստից հիանալի վարդապետ յոյն ցեղն, որ այնքան քաջ էր միանգամայն, չունէր քաղաքական հանճար, և իւր քաղաքական կազմակերպութիւն «հասարակութիւն»կոչուած աստիճանին վերայ մընաց, ուստի և արտաքին թշնամեաց դէմ ինքզինք պաշտպանելու անզօր՝ ինկաւ օտարի գերիշխանութեան ներքև։

Այդ մեծ ու սքանչելի ցեղի բոլոր հանճարն քաղաքական շրջանէ դուրս՝ ազնիւ և վեհ նիւթերու մէջ բոցավառեցաւ։

Լատին կամ Հռովմէական ցեղն, յամենայնի աշակերտ և հետեւող հելլենականին, ցոյց տուաւ սակայն հզօրագոյն քաղաքական հանճար։ Նա գիտցաւ տալ իրաւանց օրինական բանաձևութիւն և ստեղծել այնպիսի կառավարութիւն մի որոյ ներքև ինկան այնքան զանազան ժողովուրդներ։ Թէև դրութիւնն կեդրոնացեալ էր և գաւառային կառավարիչք լոկ գործիչք էին կեդրոնին, առանց ոևէ ինքնավարութեան, սակայն օրէնքն էր հեղինակութիւն ոչ թէ անձնական կամքն ու քիմքն։

Հռովմէական հանճարն տիեզերական պետութեան հիմնարկուն եղաւ, և արտաքին թշնամեաց դէմ կայսրութիւնն պաշտպանելու խնդիրն գրեթէ լուծեց։ Սակայն

այդ ծրագրի գործադրութեամբ վերջապէս յայտնի երեւեցաւ իւր միակողմանիութիւն։ Տեղական ինքնօրինութիւն չէր կրնար գոյութիւն ունենալ այդ դրութեան մէջ, և ոչ անհատական ազատութիւնն կրնար զարգանալ։ Իւր տիեզերականութեամբ սպառնալով ցեղաբանական տարբերութեանց՝ էր նաև անժողովրդական։

Մարդկային ազգի շրջափոխութիւնն տեսելով՝ հնար եղաւ յետոյ ուրեմն միօրինակութիւնն պէսպիսութեան զուգորդել, և վեհապետութիւնն ազատութեան։ Զայս ի գլուխ հանելու համար պէտք էր քան զհռովմէականն իսկ հզօրագոյն հանճար քաղաքական, և այդ եղաւ Տեւտոնականն։

Ոչ տիեզերական այլ «ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆ»է քաղաքական կազմակերպութեան բարձրագոյն ձեւն որոյ ստեղծումն արդի ժամանակաց մէջ եղաւ և կը յառաջանայ առաջնորդութեամբ Տեւտոնական ցեղից։ Անկլօ-Սաքսոնք և Նորմանք յԱնգլիա, Գերմանք ի Գերմանիա՝ Հոլանտա և Աւստրիա, Ֆռանքք ի Գաղիա և Պելճիգա, Լոմպարտացիք յԻտալիա, Վիսիգոթք ի Սպանիա տիրող տարերքն եղած են արդի ազգային պետութիւններն կազմելու մէջ։

Արդի պետութեան սկզբունքն են ազգային միութիւն և անկախութիւն։ Աշխարհագրական սահման կ'առնու ցեղն ու լեզուն, և փոխանակ, հանգոյն Լատինականին, հակազգային լինելու, կը զարգացունէ ազգային ինքնուրոյն փափկագոյն գծեր բնաւորութեան և հանճարի, և կ'ապատէ տիեզերական կայսրութեան միօրինակութենէն։ Ապաքէն միջազգային արդի սերտ յարաբերութեանց չնորհիւ ազգերն իրարու ևս քան զևս նման կ'եղանին, Անգլիացւոյն և Ֆռանսացւոյն միջև խոշոր տարբերութիւնք աստի կը նուազին, սակայն անտի՝ անհատի և անհատի միջև տարբերութիւնք կ'աճին և ազգային երանգն կը պահուի յօգուտ մարդկային յառաջդիմութեան։(1)

Ազգային Պետութիւնն նախորդ կազմակերպութեանց վերայ ունի զա՛յն նշանաւոր առաւելութիւն ևս որ հզօր և ազատ միանգաման է, թոյլ տալով կառավարելոց մասնակցիլ կառավարութեան։ Պետութեան օրէնքն ժողովրդէն կը բխի և կը սրբագործուի, որովհետև ժողովուրդը մի և նոյն լեզուն կը խօսի, մի և նոյն իտէականն ունի, և իրաւանց ու անիրաւութեան սկզբունքներն մի և նոյն կերպով կ'ըմբռնէ։ Այս դրութեան մէջ կեդրոնն կը պահէ իւր բովանդակ ոյժն, ինչպէս նաև տեղական ինքնօրինութիւնն զիւրն, իւրաքանչիւրն ունենալով որոշ սահման։ Ոչ վտանգ կայ որ ժողովուրդն թմրի, և ոչ երկիւղ որ կառավարութիւնն եղանի բռնապետական։(1)

Բ

Քաղաքական հանճարի տեսակետով Հայ ցեղն դասաւորելու դժուարութիւն չկայ։ Մեր ազգային պատմութիւնն շատ որոշ կը ցուցնէ թէ մեք քաղաքական կազմաւորութեան ընդունակութեան մասին յետնեալ եմք գտնուած։ Մեր հզօր դրացեաց, Ասորեստանեայց և Պարսից պէս ասիական ալ չեմք եղած բոլորովին(2)։ Հայք չունեցան զօրաւոր բռնապետական տէրութիւն և Մեծին Տիգրանայ կայսրութիւն, զիարդ և իցէ, կարճակեաց եղաւ։ Եւ ո՞չ ապաքէն մեր Արշակունեաց բաղդատաբար հզօր հարստութիւնն ալ օտարի ձեռամբ կազմաւորեալ էր։ Գարագաշեան որքան առարկութիւններ ալ հնարի գտնել, Խորենացւոյն և օտար պատմչաց վկայութենէն յայտնի է թէ Արշակունիք բնիկ հայ ցեղ չէին, ինչպէս կ'երեւի նաև այն պարագայէն որ երբ Սասանական հարստութիւնն ի Պարսկաստան յաջողեցաւ յաջորդել Արշակունւոյն, մեր և Պարսից մէջ գտնուող բարեկամական առնչութիւնն վերջացաւ։

Արշակունեաց տէրութեան վախճանէն դարեր յետոյ երբ Բագրատունեանցն հաստատուեցաւ, մերայինք դարձեալ ողբալի կերպով թերացան ի քաղաքական հանճարէ։ Թշուառութեան անցեալ դարերն, ներկայի դժուարութիւնք և վտանգք բա-

(1) Alfred Fouillee, La Psychologie des peuples et l'Anthropologie. Revue des Deux Mondes, 15 Mars, 1895.

(1) John W. Burgess, Political Science & Comparative Constitutional Law. Vol. I, Chap. III.

(2) «ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ» մէջ յայտնած եմք մեր այն տեսութիւն թէ Հայն եւրոպական և ասիական միանգամայն է։

ական չեղան մեր նախարարաց ներշնչել. փրկարար երկիւղ և կեդրոնամէտ ոգի։ Հազիւ կարող եղած էինք մի թագ ձեռք բերել, և ահա այլև այլ նախարարք, փոխանակ կեդրոնին ոյժ տալու և «ազգային» թագին առջեւ հպարտութեամբ խոնարհելու, հետամուտ եղան իրենք ևս, իրեւ զինուորական ցեղապետներ, մի մի թագ ունենալ, և հնարեցան արդարեւ փոքրիկ թագաւորութիւններ ստեղծել։ Այսպէսով բուն ազգային թագին ոյժն ու նշանակութիւնն խոնարհեցուցին և անկումն փութացուցին։

Հարկաւ պահանջելի չէ որ միջին դարու Հայք ազգութիւնն ըմբռնէին որպէս զարդիւ կ'ըմբռնեմք մեք. բայց եթէ մեր ազգային առաջնորդք և պետք, ազնուականք և նախարարք Հայաստանի համար մի ընդհանուր և զօրաւոր թագաւորութիւն ունենալու գաղափարն և հարկաւորութիւնն ըմբռնէին, տարբեր կը վարուէին։

Ռուբինեանց փոքր թագաւորութեան ժամանակ ևս կացութիւնն նոյն է։ Մեր վերջին թագաւորներն Հռովմայ Պապին դեսպան և թուղթ յղելով կը խնդրէին որ զքրիստոնեայ ազգերն յորդորէ խաչակրութիւնն վերսկսիլ և Հայոց իշխանութիւնն փրկել մօտալուտ վտանգէ, մինչդեռ Եւրոպացիք, հասունացած Արեւելից հետ ընդհարմամբ, նոր իտէականով բռնուած, մտած էին տարբեր ուղղութեան և կեանքի շրջան մի, և անկարելի էր այլ ևս խլրտել զնոսա ի խաչակրութիւն։ Մեր թագաւորք խաչակրութեան վերջանալէն 50—60 տարի յետոյ դեռ իրենց քաղաքականութիւն և դիմումներ կը ծրագրէին այն տխմար յուսով թէ Պապն իրենց պիտի օգնէր։

Հարկ է չանտեսել այն կարեւոր ճշմարտութիւնն թէ Հայք զինուորական ոգիէ զուրկ չէին, ընդհակառակն՝ քաջամարտիկ և արի ժողովուրդ մ'եղած են նոքա, և հայ գնդերն յաճախ յաղթած են քան զիրենք բազմապատիկ ստուարագոյն բանակաց։ Ոչ Արշակունեաց միայն օրով, այլ և օտար իշխաններով կառավարուելու ատեն, ինչպէս և յաւուրս Բագրատունեանց և Ռուբինեանց, զինուորական բարձր ընդունակութիւն ցուցած է մեր ցեղն։ Հայ զինուորն տոկուն, անվախ, ճարպիկ, ուշիմ և անձնուէր է։ Այսօր իսկ Հայք, ուր որ զէնք գործածելու ազատութիւն ունին, զինուորի և մարտկի գերազանցութիւններն ի հանդէս կը բերեն։ Ապացոյց Զէյթունցին, և դարձեալ ապացոյց Սասունցին։

Սասունցին ապացոյց, այո՛, մեր քաջութեան. Սասունցի մարդն, կինն, պառաւն, ծերուկն ու մանուկն, որք անզէն կամ բրազէն՝ դէմ դրին կացմ և կիրթ բանակի և թնդանօթաց, և ոչ սակաւ զինեալներ սպաննելէ յետոյ ինկան։

Ինչպէս քաջութեան մասին նոյնպէս, դժբաղդաբար, քաղաքական հանճարի մասին մի և նոյն է արդի Հայն ինչպէս իր նախնիք։

Թող որ մինչև քիչ ամիսներ առաջ կ. Պոլսոյ մէջ մեր ազգի առաջնորդներն Բ. Դռնէն գթութիւն կը սպասէին Հայաստանի համար, թէպէտ Օսմանցին անամօթ պարզութեամբ մեր առջեւ դրած էր իր մոլեգին հայատեցութեան որոտուն ապացոյցներն.— ո՞չ ապաքէն նոյն իսկ Սասնոյ դէպքն կը ցուցնէ մեր քաջարի կռուողութեան հետ նաև մեր խեղճ քաղաքական ոգին։ Հարկ է որ պնդեմք այս կետի վերայ և որքան հնար է պայծառ երեւի այն։ Սասնոյ կոտորածն ի հանդէս բերաւ ոմանց դիւցազնական աստիճանի քաջութիւնն, և ամենուն արութիւնն, և այժմ ազգն կաշխատի Եւրոպիոյ ուշն ու գութն հրաւիրել Հայաստանի վերայ՝ ցոյց տալով 10,000 նահատակներ թուրք խրժդժութեան զոհ եղած, ցոյց տալով նաև թուրք կառավարութեան խայտառակ անընդունակութիւնն ու դժկամակութիւնն ի կառավարել զՀայաստան.— այդ ամենն լաւ. բայց խոստովանիմք թէ Սասնոյ ազէտն, ինչ անուղղակի օգտի ալ ծառայէ, մեծ ազէտ մ'էր որ եկաւ ազգին, և ազէտ մի որ չպիտի գար եթէ մեր քաղաքական տխմարութիւնն չհաւասարէր Թրքի բարբարոսութեան։ Նախ, մեծ տխմարութիւն կը լինէր մեր կողմանէ կամաւ այդ կոտորածի տեղի տալ՝ Եւրոպիոյ միջնորդութիւնն գրգռելու նպատակաւ. և կը մերժեմք մեք անձնապէս այն անհեթեթ ենթադրութիւնն թէ հնչակեան առաջնորդներ բաղձալի նկատած լինին այնպիսի բարբարիկ արարք՝ քաղաքական տեսակետով։ Աւելի բանաւոր ենթադրութիւնն այն է թէ գործիչ ոմն (կամ երկու) զՍասուն նկատեց իբրեւ ամրագոյնն

հայ գաւառաց ուր կարելի էր թիսել ապստամբական ոգւով և հանդերձել մի փայլուն և յաջող դիմադրութիւն թուրք հարստահարութեանց դէմ։ Այսպիսի խորհուրդ խորապէս հայրենասիրական է և գովելի։ Բայց տես որ զայն իրագործելու չարաչար վրիպեցաւ յղացողն և բովանդակ գաւառ մի, ի՞նչ կ'ասեմ, Հայաստանի լաւագոյն գաւառն, արիագոյն հասարակութիւնն ջնջուեցաւ։ Գուցէ մեր միտքն անկատար ըմբռնելով ոմանք գոչեն — ի՞նչ կ'ուզես, թուրք կառավարութիւնն չափազանց բարբարոս է, և ոչէտն նորա վայրագութեան կը պարտիմք։— Եւ մեք կը պնդեմք թէ խնդիրն ճիշդ այն է թէ գործիչն պարտէր խորապէս ըմբռնած լինէր թուրք քաղաքականութեան միտումն ու բարբարոս յանդգնութիւնն և՝ ըստ այնմ՝ նախատեսութեամբ շարժէր։ Կարնոյ մէջ յեղափոխական ընկերութիւն մի կազմուեցաւ, շուտով մատնուելով սոսկալի շարիք բերաւ երիտասարդ հայրենասիրացն։ Սասնոյ մէջ դիմադրութեան ոգի պատրաստել սկսան, և արտաստահմանի հայ լրագրին մէջ այնպիսի բաներ հրատարակեցին, և ուրիշ գաւառաց խլրտումներու մասին այնքան փոշ հնչեցուցին, այնպիսի չափազանց երեւոյթ զգեցուցին ամեն բանի—փոխանակ գաղտնիք պահելու և կամ փոքրկացուցնելու— որ թուրք կառավարութիւնն թունդ ելաւ և ծայրայեղ բարբարոսութեամբ ճնշեց ապագայի ոյժն իւր սաղմի մէջ։

Մեծ դաս մի սովրած կը լինիմք եթէ հայքս, դարաւոր փորձառութենէ յետոյ, հասու լինիմք այժմ այն ճշմարտութեան թէ քաջութիւնն բաւական չէ ժողովուրդ մի փրկելու, թէև փրկութեան անհրաժեշտ պայմաններէն մին է. և այն ճշմարտութեանն ևս թէ հայրենասիրական զգացումն ալ, որքան ալ անկեղծ լինի, չի բաւեր հայրենիքն ազատելու, թէև ազատութեան կարեւոր պայման մ'է։— Պէտք է որ քաջութեան և հայրենասիրութեան առաջնորդէ քաղաքական ոգին։

Քաջութեամբ և հայրենասիրութեամբ կորուսինք զՍասուն, և նոյն պատուաւոր կերպով կարելի է կորուսանել մնացածն ալ։

Տակաւին քաջութիւն ու հայրենասիրութիւնն ալ նորածիլ են մեր մէջ և անդադար մշակութեան կարօտ, սակայն պէտք է նկատել թէ աւելի մասնաւոր և երկար մշակութեան կարօտ է քաղաքական ոգին։ Ինչ ինչ պարագայից մէջ վախկոտն ալ կ'արիանայ ու գաղջ հայրենասէրըն յանկարծ կ'եռայ, իսկ քաղաքական ոգին այնպիսի բան մ'է որ ոչ է պարագայի մէջ յանկարծ գոյանալ չի կրնար։ Այդ ոգին ազգային և զինուորական ոգւոյ բարեկամ է, բայց զինուոր և հայրենասէր ժողովուրդ մի կրնայ յաւիտեան զուրկ մնալ անկէ եթէ յատուկ դաստիարակութեամբ չմշակէ զայն։

Գ

Եւ ի՞նչ է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԳԻՆ։

Քաղաքական ոգին օրէնքի և կառավարութեան հանճարն է։ Որքան հզօր է հանճարն, այնքան աւելի բարձր և կատարեալ են անկէ ծագող օրէնքն ու կառավարական դրութիւն. Կեղտ, Լատին և Տեւտոն ցեղերու այդ նկատմամբ մի քանի զմի բարձրութիւնն զոր Ա. հատուածի մէջ նշանակեցինք, բաւական կը պարզէ քաղաքական հանճարի նշաններն ու արդիւնքն։ Աւելի պարզելու համար յիշենք այդ ոգւոյ մի քանի նշաններն։

Նախ, քաղաքական հանճարի ժողովուրդն զգայնիկ չէ, այսինքն զգացմունք և կիրք ս'չ, այլ դատողութիւն, ցուրտ տրամախոհութիւնն կը յօրինէ նորա ծրագիրն, կուտայ նմա ուղղութիւն, հետևապէս ծրագիր որոշ, և ուղղութիւն հաստատուն ու տեւական։ Անքաղաքական ժողովուրդն, ընդհակառակն, դիւրագրգիռ լինելով՝ յանկարծական ոգեւորութեան ընդունակ է, բայց նաև դիւրամոլոր և յեղյեղուկ։ Դիմէ՛ իւր զգացմանց, յուզէ՛ սիրան, և կ'անէ նա ինչ որ ուզես, եթէ շուտով անելու բան է առաջարկդ։ Հարկ չէ որ փասաերդ հաստահիմն լինին և պատճառներդ իմաստուն, բաւական է որ ոչ է հաճելի նոյն իսկ այլանդակ չափազանցութեամբք գիտնաս գրգռել իւր զգացումներն։

Իբրեւ կից առաջնոյն՝ կայ երկրորդ տարբերութիւն մի այս երկու տեսակ ժողովրդոց մէջ։— քաղաքականամիտն խէտականի և ծրագրի գործադրութեան հեռամուտ է հասկացողութեամբ, իսկ անքաղաքականն՝ անձի հետեւող և սքանչացող է։ Պաշտուած անձն կրնայ երբեմն մեծ հանճարի և ոգւոյ տէր ոչ լինիլ,

բայց այդ անհրաժեշտ պայման չէ պաշտելի հանդիսանալու համար. բաւական է որ իշխանաղն լինի, նախարարական բարձրութիւն կամ ցեղապետի դիրք ունենայ, խոշոր տիտղոսներով զարդարուած անուն կրէ, շքանշաններ, գոնէ փառաւոր մօրուք։ Ինչ որ «նա» ասէ, պատգամ է։ Ինչ որ «նա» խոստանայ, կարելի է, թէպէտ և անկարելի լինի մարդկօրէն։

Քաղաքական ոգի ունեցող ժողովուրդը այդքան դիւրաւ չի խաբուիր արտաքին փառաւորութենէ և վիթխարի խոստումներէ։ Նա խստապահանջ տրամաբանութեամբ կը նայի անձանց և իրաց, որովհետև քաղաքական ոգին համաբուն է գիտական ոգւոյ որ ենթադրականն ստոյգէն, սուտն ճշմարտէն, հրաշազանն դրականէն որոշելու հետամուտ սէր կը նշանակէ և խստագոյն միտք (1)։ Քաղաքականամիտ ժողովուրդն, պատուելով հանդերձ իր գործիչներ, չընդունիր թէ հայրենասիրին անպտուղ կամ վնասաբեր ուղղութեան դէմ ելնել ապերախտութիւն է։

Քաղաքական ոգւոյ երրորդ նշան մի անկրօնականութիւնն է։ Չշփոթենք «անկրօնականութիւն» բառն «անկրօնութիւն» բառին հետ։ Ամենեւին ասել չեմք ուզեր թէ խիստ տրամաբանութեան սովորած ժողովուրդն անկրօնութեան կը յանգի, այլ թէ նա զկրօնն կը զատէ քաղաքականութենէ, և զեկեղեցին՝ պետութենէ։ Ազգային պետութիւն կազմելու համար պետութեան անդամք պարտին ունենալ քաղաքական և ազգային խնդրոց, քաղաքային իրաւանց և ընկերային պարտուց վերայ հիմնապէս համաձայն տեսութիւն. իսկ կրօնական խնդիրներն, ուր զգացումն աւելի մեծ դեր ունի քան դատողութիւնն, և յորում մարդոց առնչութիւնն ո՛չ մարդոց այլ Արարչին հետ է, պէտք է թողուլ անհատն ինքն իրեն։ «Ազգային կրօնք» ասել հակասութիւն մի արտասանել է, և «ազգային եկեղեցի» ճանաչել ազգային զարգացման փոխանցական փափուկ անցքի մի մէջ գլուխն խոնարհել է։ Արդի բոլոր ազգային պետութեանց մէջ եկեղեցին պետութենէն կա՛մ բաժնուած է և կամ բաժնուելու ուղղութեան մէջ։ Կլատոթան յոյժ կրօնասէր է, բայց եռանդուն ջատագով եկեղեցւոյ բաժանման ի պետութենէ։ Լուսամիտ կղերն ալ այդմ կը փափաքի, գիտնալով թէ եկեղեցին աւելի ազատ և զօրաւոր կը լինի պետութենէ անկախ լինելով, և պետութիւնն աւելի ազատ ու զօրաւոր՝ եկեղեցիէն զատուած լինելով։ Եւ շատ ակներեւ է թէ ինչու այս որոշումն բաղձալի կը նկատուի բոլոր նորոգ պետութեանց մէջ։ Քանի որ ազգային միութիւնն է նոցա նշանաբան, հարկ է միութեան ազգային պայմաններն առնուլ հիմունք, և դուրս թողուլ ամեն ինչ, մանաւանդ կրօնական և եկեղեցական համոզումն, որ ընդհանուր համաձայնութեան առարկայ չի կրնար լինիլ։

Այս նշաններն պայծառապէս կը ցուցնեն քաղաքական ժողովրդի մտքին ազատ, բարձր, թափանցող, հասուն վիճակն։ Եւ զարմանք չէ որ Ազգային Պետութիւնն, որ քաղաքական կազմակերպութեանց կատարելագոյն ձևն է, արդի ժամանակի պտուղ է, այսինքն մարդկային կառավարութեան բիւրամեայ շրջափոխութեան ծանօթ բարձրագոյն փուլն (phase)։

Եւ որովհետև կը հաւատամք թէ մարդկային ազնուագոյն ցեղերն զարգացման ընդունակ են, կը հաւատամք թէ Հայք ևս, որք ցեղերու ազնուագունին կը պատկանին, կարող են կրթութեամբ ստանալ քաղաքական բարձր ոգի և ազգային միութիւն ու անկախ պետութիւն կազմել։ այս հաւատք ցնորական չէ։ Մեր ժողովուրդ այդ ուղղութեամբ յամրաշարժ բայց ստոյգ յառաջդիմութիւն մի գործել կը խոստանայ։

Դ.

Հայաստանի ապագոյին համար հարկաւոր է քաղաքական ոգւոյ այժմէն ամենայն խնամով մշակումն մեր մէջ։ Թէ մեր ներկայ գործունէութեան և թէ ապագային համար հարկաւոր է այն։ Հին դարուց ոգւով անհնար է արդի ազգայի պետութիւն կազմել, մեք մեզ չի խաբեմք։ Դիտել պարտ է թէ մեր այժմեան գործունէութեան եղանակք են ինչպէս էին ի միջին դարու—դեռ նախարարական դրութիւնն, ցեղապետական կերպն է որ կը շարունակէ նոր ձևի տակ. դեռ այս կամ այն պետի ետևէ կը վազեմք, ոչ թէ ազգային ծրագրի գործադրութեան կը ձգտիմք ժողովրդական միահամուռ և համերաշխ ոյժերով։ Դեռ կարգ մի մար-

(1) Տես «Գիտական Ոգին մեր մէջ», ՀԱՅՐ Գ տարի, թ. 19

դիկ այս ինչ և կարգ մ'ալ այն ինչ հայրենասէր գործիչին անձին կը համակրին և դրամով ու գովաբանութեամբ կը նըպաստեն։ Դեռ կրօնական խտրադիր ոգին, չափազանցելու տխմար միտումն, գաղտնիք պահուելու բաներն տանեաց վերայ քարոզելու սնափառութիւնն, և մանաւանդ անկախ և ազատ գործիչ լինելու ոէրն և այլոց հետ գործակից և կազմակերպեալ մարմին լինելէ խորշումն կը տիրեն առ մեզ։

Արդէն ասած եմք, նորէն կ'ասեմք, թէ մեր ձեռքն է այժմէն քաղաքական ազգային պետութեան մի նախատիպն յօրինել։ Կեդրոնական Յանձնախումբ, արտասահմանի Ազգային Վարչութիւն ևն. բառերով զայդ կազմակերպութիւն կը նըշանակեմք տարիներէ ի վեր։ Առանձին գործիչի գլխաւորութեամբ զատ զատ ընկերակցութիւններ ունենալու ժամանակն անցած է. պէտք է դոցա յաջորդէ համահայկական դաշնակցութիւնն բոլոր ընկերութեանց մէջ, և զատ զատ առաջնորդի տեղ կեդրոնական ազգային Ղեկավարութիւն մի ուր միացած լինին մի քանի կարողագոյն ծանօթ առաջնորդներ։

Նախորդ թուով կ'ասէինք թէ այսպիսի ընդհանրական միութեան մի հասնելու կարճ և գործնական ճանապարհն այն է որ անմիջապէս մի ընկերութիւն բանակցի և միանայ մի մերձաւոր ընկերութեան հետ, և երկուքն միանան երրորդի մի հետ, ու այսպէս այլ և այլ կեդրոններէ ձուլման գործողութիւնն ծաւալելով՝ անյապաղ յանգի համօրէն միութեան։

Կը հարցնեմք ընկերութեանց—սկսա՞ք այդպէս անել, թէ իրարու կը սպասէք։ Ինչ մի արթնցէ՛ք. թօթափեցէ՛ք դանդաղութեան չղթաներն։ Գործածեցէք ձեր բանականութիւնն, քննեցէք ամենայն խստութեամբ կերպն և նպատակն զորս կ'առաջարկեմք. եթէ բանաւոր կը գտնէք, փութացէք ի գործ դնել, հոգ մի անէք թէ ով է առաջարկողն։ Եթէ մերժէք բանաւոր առաջարկ մի անոր համար որ առաջարկողն նշանաւոր մարդ մի չէ, կը ցուցնէք ձեր ... լաւ է չասեմ, գիտեմ դուք չափազանց կը վիրաւորիք։ Արդէն ձենէ ոմանց գուցէ բռնկի բարկութիւնն ՀԱՑԻՔի դէմ, ասելով թէ նորէն գործիչներն քննադատեր է։ Բայց եթէ քիչ մի պաղարիւնութեամբ խորհիք, պիտի տեսնէք թէ ՀԱՑՔ ոչ մի գործիչ անպատուելու խօսք կ'արտասանէ։ ՀԱՑՔ, առաջին թիւէն սկսեալ, 1890էն ի վեր, կ'աղաղակէ թէ պարտ է կազմակերպուիլ։ Նա գոհ չէ եղած հայրենասիրական զգացումներ արծարծելով և զկծեցուցիչ լուրեր հաղորդելով, որպէս ուրիշ թերթեր կ'անեն—և յաւ կանեն—այլ ՀԱՑՔ կը նըկրտի բոլոր ուժով մղել զժողովուրդն քաղաքական կեանքի և կազմակերպեալ կառավարութեան նախաքայլն առնելու, որ զգացմանց խանդավառութեան յաջորդող գործնական և փրկաւէտ քայլն պէտք է լինի, եթէ իրօք ազատութեան հասնիլ կ'ուզեմք։

ՀԱՑՔ պիտի փաստաբանէ այս հարկն, թէ ցաւիք և թէ ոչ. նա բոլոր ուժովն պիտի պօռայ թէ հարկ է քաղաքական ժողովուրդ լինելու սկսիլ, մինչեւ որ չունչն հատնի և բերանն փակուի ժողովրդի անմիտ մասին բարկութեան և անտարբերութեան չնորհիւ, և կամ, զգօն մասին ջանիւք ի գործ դրուի իւր փրկաւէտ առաջարկ։

ԱՐՀԱԻԻՐՔ ԱՐՀԱԻՐԱՑ ԻՍԱՍՈՒՆ

Զէ՛, այլ ևս չէ հնար թուրք ցեղին չտալ առաջին տեղն հին և նոր բարբարոս ցեղից մէջ։ Թուրքն ինքզինքն անգամ գերազանցելով, կատարած է Սասնոյ Հայոց վերայ այնպիսի զարհուրելի գազանութիւններ զորս չի կրնար կարդալ ոք առանց սաստիկ յուզուելու ա՛յն տպաւորութեամբ թէ մարդկային ազգի բոլոր հին ու նոր խժդժութեանց քան զամենայն խժդժականն ունի իւր աչաց առջեւ։

ՀԱՑՔի ներկայ թուոյ մէջ տեղ չէ մնացեր դժբազդարար տալ այն բազմիջեան ընդարձակագոյն տեղեկագիրներն զորս Թայմզ և Տէյլի Նիւզ հրատարակեցին անցեալ օր իրենց յատուկ թղթակիցներէն որ ի Հայաստան։ Արդէն անկարելի էր ամբողջ թարգմանել զայնս, զի ՀԱՑՔի գոնէ 64 սիւնակներն պիտի ընուին։ Կը շատանամք մի քանի կտորներ թարգմանելով,—

(Թայմզէն.) «Բուն Ջարդին գալով՝ ուստի՞ սկսիմ և զո՞րն պատմեմ: Պարզապէս անպատմելի է: ԺԹ դարու Արեւմտեայք չեն կարող հասկանալ զայն: Սակայն և այնպէս պիտի փորձեմ մի քանի իրողութիւններ դնել առաջի: Ասայի թէ Հայք Քրդաց դէմ կռուին մէջ գրեթէ սպառած էին իրենց ռազմամթերքն և թէ նոքա դէմ չդրին զօրաց, թէև կարելի է որ ի վերջոյ, յետին յուսահատութեան մէջ, ոմանք իրենց կեանքն թանկ ծախեցին զօրաց: Երբ անձնատուր եղողներուն չար բաղդն լու լինիլ սկսաւ, ոմանք յաջողեցան փախչիլ: Ալ ընդհանուր եղաւ տներուն կրակ տալ, սպաննել մեծ ու պզտիկ երկուսեռէն: Վեց թնդանօթներու միահաղոյն որոտմունքն խեղդեցին կանանւոյն և մանկտւոյ ճիչերն: Զերիտասարդներն կը բռնէին, ոտք ձեռք կը կապէին, կը դնէին գետին, և ցախ դիզելով ի վերայ, կը հրկիզէին: Զայլս յօշ յօշ կը պատառէին: Ի Շենիկ յիսնեակ մի այր, կին և տղայք լեցուած էին տան մի մէջ, զօրքն հրդեհեցին զտունն: Տղեկ մի խուսափիլ փորձեց բոցերուն յարձակումէն, զինուորք Սուինի ծայրով նետեցին զնա ետ: Գրգօ, գիւղին ընչեղագոյն արանց մին չխուսեց, զի չկամէր լքանել իւր կին որ մէկ կամ երկու աւուր տղացկան էր: Բռնեցին զԳրգօ և բերին Զելանի Շէյխին և գնդաց հրամանատարին առջեւ: Կ'երեւի թէ նախորդ տարւոյ կռուին մէջ (այս քաջ Հայն) վիրաւորած էր Շէյխին զինակիցն: Այժմ զօրքն ու Քրդերն ոխաթափ լինելու պատեհ գտան: Տարին զնա ի տունըն, ուր լծակիցն կ'ընկողմանէր, և անդ դնելով նորածին երախայն մօրկանն կըրծոց վերայ, զերկոսին կտրեցին ի մի հարուած սրոյ: Ապա զԳրգօ տարին հեռու մի վայր և սպաննեցին: Նորա չապիկն, ազնիւ կտաւէ շինուած, զոր ճանաչեց բուն կարողն, գտնուեցաւ յետոյ: Իբր 20 սուինի ծակեր կային ի չապկին: զԳրգօյ եղբօր՝ Ղազարի՝ կինն, արտակարգ գեղեցկուհի, զինուորներն պահեցին մի քանի օր և ստիպեցին որ հաւատքն ուրանայ, բայց որովհետեւ հաստատապէս մերժեց, մեռուցին: Զինուորք ընտիր մանկամարդ կիներ, երկուք՝ այդ գիւղէն, հինգ՝ Հեթինքէն, չորս՝ Աղբիկէն վերապահած էին և օրերով ի զուր ջանալէ յետոյ համոզել զնոսա իսլամութիւնն ընդունիլ՝ մորթեցին ամենքն: Զինուոր մի Աղբիկցի 11 տարեկան աղջիկ մի սեփհականած էր իրեն, և երբ ուրիշ զինուոր մի ուզեց առնուլ զայն ձեռքէն և առաջինն չհաւանեցաւ, գնդակահար սպաննեց աղջիկն: Պառաւ ոք իւր 10 կամ 15 տարեկան թոռանն հետ եկաւ ի բանակն և մինչ կը պաղատէր որ սպայն խնայէ իրենց կենաց, զինուոր մի սուինն մխեց նորա թիկունքէն և գետին փռեց: Սպայն առաւ տղայն իրեն համար, և պահեց զնա իբր երկու շաբաթ. և օր մի, երբ յղած էր զնա ջուր բերել աղբիւրէն, լսեց հրացանի պայթիւն, և դարձաւ տեսաւ որ իւր փոքր ծառայն գետին ինկած էր գնդակահար: Հետեւեալն հիւանդ զինուորի մի պատմութիւնն է տարապարհակ վարեալ հայու մի: Զինուորք կին մի տեսան «երկու հոգւով» (իքն ճանլը) որ գիւղէ մի կը փախչէր: Սպայ մի հրաման տուաւ (պատմող) զինուորին կըրակել, բայց նա չէր կարող իւրոյն որոշել այդպիսի բան մ'անել, երկու անգամ կրակ արաւ բայց դիտմամբ վրիպեցաւ. առ այս բարկացաւ սպայն և բռնցի հարուած մի տալով զինուորին՝ առաւ ձեռքէն հրացանն և կրակեց: Կինն ինկաւ մեծ ճիչ մի արձակելով, և մարդն վազեց փորն ճեղքեց և անծին մանկիկ մի կենդանի դուրս հանեց: Այդ տեսարանին առջեւ զինուորն սոսկացած էր և այն վայրկեանէն ի վեր հիւանդ էր: Այդպիսի վիճակի մէջ գտնուող կիներն այդ կերպով ճեղքել սովորական դէպք էր: Այլ պատմութիւն: Մինչ զինուորներ կ'անցնէին գիւղի մի փողոցէն, գտան մանուկ մի անդ նստած, Հարիւրապետն հրամայեց զինուորի մի սպաննել զմանուկն, և զինուորն համարձակեցաւ հարցնել թէ մանուկն ի՛նչ մեղք ունէր: Յանժամ հարիւրապետն հարցաւ զինուորին թէ միթէ ի՞նքն ալ ապստամբ «քեաֆիր» էր եղել: Ասոր վերայ զինուորը սրոյն կռնակովն գետին փռեց մանուկըն և անցան գնացին: Զինուոր մի երկու տղեկ գտաւ ապառաժի մի ետեւ, որք թըփոց տերեւ կը ծամէին յանսուաղութենէ: գթաց անոնց և երկու օր իւր պարէնէն բաժին հանեց անտիրական փոքրիկներուն, բայց իւր յաջորդ այցելութեան ատեն գըտաւ զնոսա մորթուած: Այլ ոմն ի զօրականէն յաջողեցաւ վեց տղայք թաքուցանել կորեկի արտի մի մէջ և իբր շաբաթ մի սնունդ հայթայթել նոցա. և ահա օր

մ'ալ կուգայ կը գտնէ զնոսա պատառ պատառ եղած։ Զինուորք ոմանք մացառներն կը խուզարկէին զոհ գտնելու, և գտնելով չորս տղայ կը բերեն զնոսա հազարապետին։ Մի քանի օր յետոյ մայրն իմանալով զուրն իւր զաւակաց, կուգայ ի բանակն, և ի տես նոցա կը մարի առ ի խնդին։ Երբ կ'ուշաբերի, «պէնպաշին» նորա աչաց առջև մորթել կուտայ տղայքն։ Քրդուհի մի 20 տղայք գոմի մի մէջ պահած գաղտ կեր կը լեցունէ անոնց, օր մի զինուորներ կ'իմանան և տղայքն կը ջարդեն։ Ամեն առտու յատուկ որսի կ'ելնէին զինուորքն՝ թաքստականներ գտնելու թըփոց և ժայռից ետեւ։ Զինուորք մացառներուն կրակ կ'անէին որպէս զի պահուածներն. եթէ կան, վախնալով դուրս ելնէին փախչելու համար։ Պատահած է մինչև անգամ որ մայրեր իրենց պահուած զաւակներուն երկիւղի ճիչերն զսպելու ջանքով խեղդած են զնոսա։ Փախստականք ոմանք զինուորաց ձեռքով խողխողուելէ պրծելու համար Տալւորիի որընթաց գետակին մէջ սարերէն գահավիժած են իրենք զիրենք։ Տալւորիկի երիտասարդ մէկ երէցն համոզած է 70 մարդ անձնասուր լինիլ։ Զինուորք նոցա ահագին մի փոս փորել կ'ուտան, և ապա զնոսա մորթելով կը լնուն, զոմանս կիսամեռ, այդ փոսին մէջ։ Ապա քահանայն կը յօշոտեն առանձինն և անոր մարմնոյն պատառներն տարբեր ուղղութեամբ կը նետեն որքան հեռու որ կրնան։ Այդ երիցու պարեգօտն կերպիւ իմն իմ ձեռքս անցաւ։ Երէց մի երկու օր աւաղանի մի մէջ ընկղմած մընալով ազատած է։ Մարդ մի իրրեւ սպանեալ կեղծելով ինկած է կոտորելոց դէզին մէջ և անշարժ մնացած է և գիշերն յաջողած է փախչիլ։ Գիւղացւոց խմբակներ, արք, կանայք, մանկունք, տասնեակներով ու հարիւրեակներով գտնուած են յորջս և ի քարանձաւս և ջարդուած են անխնայ։ Պարտիմ ասել թէ դիմադրող գիւղացիք Շատախցիք էին, Տալւորիկեան գիւղախումբն և անոր անմիջական դրակցութեան մէջ գտնուողներն։ Բոլոր մնացեալք, որքան որ ես կրցայ տեղեկանալ, յարձակում կրած են առանց դիմադրելու։

Անկլէ-Հայկական Ընկերակցութեան 1,000 անգլ. լիրա յղած է Ն. Մ. ի Ռուսիոյ։

ԻՆՉ ԻՆՉ ԼՈՒԾՈՒՄ ՊԷՏՔ Է ՏԱԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ

ԿԱՐԾԻՔ ՄԱՆՉԷՍԹԷՐ ԿԱՐՏԵԼՆԻ

Մանչէսթէրի անգլիական ազատական թերթն, որ իւր հայասիրութեամբ ծանօթ է, խմբագրական մի նուիրած է Հայկ. Խնդրոյն՝ առթիւ Կրինի գրքին։ Ահաւասիկ թէ ինչ կ'ասէ Կլատսթոնեան լրագիրն.—

«Թուրք կառավարութիւնն ի Հայաստան շատոնց հասած և անցած է այն կէտն յորում պարտ է անգամ մ'ևս խօսիլ աղխով մաղխով չուելու վերայ։ Տեսլական լուծումն պիտի լինէր ինքնավար մի Հայաստան՝ ըստ օրինակի Պուլկարիոյ։ Դժբաղդաբար այդպիսի պետութեան մի պայմաններն չկան։ Օսմանեան Հայաստանի մէջ չիք բաւական Հայ, և այն ալ չափազանց խառնուած է Թրքաց և քրդաց հետ։ Ի սրտէ կը բաղձայինք որ կարելի լինէր, սակայն Տիար Կրին ալ կ'աւելնայ այն ոչ սակաւ դիտողաց որք, թէև շատ բարեացակամ Հայոց, համոզուած են թէ չէ կարելի։ Երկու կամկամ կը մնան.— տեսակ մի եւրոպական համատիրութիւն (condominium) եւրոպացի կառավարչաւ և հեծեալ ոստիկանութեամբ որ բաղկանայ Հայաստան բնակեալ ամեն ցեղերէն և ըսպայաւորի եւրոպացիներով. կա'մ Ռուսական կցումն։ Կ'երկնչիմք թէ գուցէ եւրոպա չկարենայ գալ յայն գործունեայ և անշահախնդիր հասկացողութիւն որ հարկաւոր է առաջին քաղաքականութեան իրագործմանն համար. և ասա կրնամք ասել ընդմիջօրէն թէ, թէպէտ Անգլիա Հայկական գործոյն մէջ շատ լաւ վարուած չէ և արժանի է այն մեղադրանաց զորս առատօրէն կը բառնայ նմա Տիար Կրին, նա համակրանաց և գործունէութեան հուր մ'է բաղդատելով Գերմանիոյ և Ֆռանսայի անտարբեր ցրտութեանն։ Եւ ոչ ալ վստահ եմք, պէտք է խոստովանիլ, թէ կարելի է այնպիսի համատիրութիւն հաստատել և պահել առանց մի կռուի ընդ մէջ մասնակից Տէրութեանց։ Մեք լիովին տեղեակ եմք առարկութեանց Հայաստանի ռուսական դրաւման դէմ. Սակայն և այնպէս այն վիճակին մէջ ուր

իրք հասած են այժմ, վախեմք թէ անկէ զատ գործնական ուրիշ լուծում չկայ։ Թրքական Հայաստանին քով՝ Ռուսական Հայաստանն է, որպէս Տիար Կրին կը ցուցնէ, մի երկրաւոր դրախտ։ Ռուսիա է միակ տէրութիւնն որ կարող է միջամտել, և այժմ մեր պետական որերոյն կը մնայ ֆասկցունել հաւասարապէս Ռուսիոյ և Թուրքիոյ թէ երբ Ռուսիա անցնի սահմանագլուխն և զԿարին ու Վան յաւելու Կարսի և Երեւանայ, այս երկիրն (Անգլիա) ոչ մի մարդ պիտի յղէ և ոչ մի գնդակ պիտի արձակէ զնա արգիլելու համար։»

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷՆ

Կահիրէ, Մարտ 9, 1895

...Այնուհետև ժողովն անցաւ այն խնդրոյ վիճաբանութեան թէ արդեօք պէ՞տք էր հրաւէր կարդալ մեր ծանօթ գործիչներուն յԵւրոպա որ միանան ի մի Ցանձնախումբ։ Մի քանիներ հակիրճ ատենախօսութիւններով բացատրեցին այնպիսի միութեան մի պէտքն ու հնարաւորութիւնն հիշդ այս միջոցիս, և համաձայնութեամբ քուէարկեց ժողովն։ Լաւ․

«Պըրէ աղբար, աս ասանկ չըլլար, Ավրոփային մէջ գործող ամէն Հայերը պէտք է միանան ու ամբողջ ազգին վըստահութիւնը շահող գոմիթէ կ'ըսէք ինչ կ'ըսէք կազմեն, անանկ որ ամէն մարդ սկսի իր փարան թէմիզ սրտով ղրկէ, ո՞ւր որո՞ւ ղրկելն ալ պէլլի ըլլայ։»

—«Ճանըմ իմ պոռացածս ալ ան է ա՛ ...էկէր քի ...ադային ըսածին պէս ըլլայ ատ վազըթը ատ գոմիթէն մեծ գործեր կրնայ տեսնել, ալ իրարու դէմ պոռալուն կը սկսին ձեռք ձեռքի տուած գիշեր ցերեկ աշխատիլ մեզի համար։» Շատ աղէկ։

Քանի օր առաջ էր որ աննկարագրելի հաճոյքն ունեցայ երկու անգամ, քանի մը րոպէի համար սակայն, պաշտելի Սրբազանի մի հետ տեսակցելու․ Սրբազան մի որ այսօր աքսորի մէջ կը տառապի և որն անտարակոյսաբար, հեղինակութիւն մ'է ազգային խնդիրներու մէջ, այդ Սրբազանն ալ բոլորովին մի և նոյն գաղափարը արտայայտեց, ինչոր, ինչպէս տեսաք ըրածս ընդօրինակութիւններէն, հեռաւոր աշխարհին գլխաւոր գաւառներուն մէջ գումարուած ժողովներուն մէջ պարզուած էր․ և ինչոր, ինչպէս որ քանի օր առաջ կը գրէի և այսօր կը կրկնեմ, Գահիրէի սրճարանին մէջ անուս յաճախորդները կը պոռային։ Ամերիկայի Հայերը, Սրբազանը «զօրաւոր յանձնախումբ» մի կը կազմեն Եւրոպայի մէջ․ սրճարանի յաճախորդն ալ «գոմիթէ» մի Ավրոփային մէջ, ահա բուն և կենսական պահանջ մը որ բառին ազդու նշանակութեամբ ընդհանրական է քանի որ, մարդ կրնայ վստահաբար ըսել թէ․ երկրագնդիս վրայի բոլոր հայերը գրեթէ սոյն օրինակ գաղափարի մի իրականացման ցանկացող են։

Եւ հիմակ որ այս գաղափարը կ'արտայայտուի, որպէս զի չմնայ լոկ արտայայտուած գաղափար և ուրիշ ոչ ինչ․ այլ սկսի իրագործման կերպարանք առնել ու շատ մօտ օրէն իրագործուած տեսնուի։ Ո՞վ պարտի գլուխ կանգնիլ այս մեծ ու բազմօգուտ կազմակերպութեան, դա շատ պարզ է որ անիկայ պարտին և կարող են սկսիլ յայտնի գործիչները միացեալ ժողով մի կազմելու են Լոնտոն, ու անմիջապէս հրաւէր կարդալու են արտասահման գտնուող նշանաւոր մի քանի անձերու, մանաւորապէս հարկ է Ռուսաստանէն առնուազն երկու հանրածանօթ անձնաւորութիւնք անդամակցին այդ ժողովին, և այդ ժողովն է որ անմիջապէս ետք պէտք է ընտրէ իւր մնայուն Նախագահը որն, լինելու է ընդհանուր ազգին համակրանքը շահող մի ամենաբարձր անձնաւորութիւն, զոր օրինակ, անկարելիութեան սահմաններուն մէջ չէ այդ անձը ընել աքսորեալ եպիսկոպոսներէն մին։

Եւ այս ըլլալով է որ ընդհանուր ազգին համար է՛ն կենսական ու յուսատու գործ մը եղած կը լինի և ընդհանրութիւնն այն ժամանակ է որ «թէմիզ» սըրտով պիտի փութացնէ իւր առատօրէն օգնութիւնները։

Օ՛ն, ի գործ։

ԱՐԱՄ

Ոմանք տալար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Րէճիսթըր անել նամակն կամ մընի օրտըր յղել առ ի ապահովութիւն։

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԷՆ

Տփղիս, 27 Մարտ, 1895

Մեծ. Խմբագիր,

Այս տեղս օրը նոր լուրը նոր է։ Փախստականք միշտ կուգան Ալաշկերտէն, Կարինէն, Վանէն և Սասունէն, որոց խղճալի վիճակին հոգ կը տանին տեղւոյս բարեսիրտ ազգայինք։ Անցեալ կիրակի տեղւոյս վանքի մայր եկեղեցւոյ բակում հոգեհանգիստ կատարուեց հանգուցեալ քաղաքապետ Իզմայլեանի համար, ժողովրդի բազմութիւնն յոքնախուռն լինելուն՝ անկարելի էր եկեղեցւոյն մէջ կատարել։ Ներդաշնակ էին երգեցողութիւններն. մարդ կը սքանչանայ ի լսել հրեշտակային գեղգեղանաց։ Երգեցիկ խումբն Ներսիսեան հոգեւոր դպրոցի աշակերտքն էին իրենց ուսուցիչներով. Ի՛նչ հիանալի են հայ եկեղեցւոյ եղանակներն երբ կանոնաւոր վարժութեամբ, զիլ և բամբ և այլ ձայներով ներդաշնակ երաժշտութիւն, ինչպէս հոս կ'անեն։

Տեղւոյս Հայերն ալ քանի մը կարգի կրնամ բաժնել։ Ոմանք կը զբաղին գրեթէ միշտ հայկական խնդրով։ Այլք Հայաստանէն լուրի կը սպասեն թէ արդեօք Ցանձնաժողովի գործը ի նպաստ Հայոց կը վերջանա՞յ և իրենց ալ պաշտօնի հոտ կուգա՞յ այն կողմերէն։ Հարկաւ երրորդ դաս մ'ալ կայ որ ոչ ազգութեան գաղափար ունի և ոչ հոգ։ Իրենց բոլոր հոգը իրենց ապրուստն է։ Սրանք մեծ մասամբ անընթերցագէտ են։ Մոռցայ յիշելու թէ մինչ կիրակի օրն ամեն մարդ տխուր կը դիմէր մայր եկեղեցին, քաղաքիս քէրվանսէրայների ոմանց մէջ խաղամոլութեան հաստուածին երկրպագուներ կային յոյժ ջերմեռանդ։ Ափսո՜ս, Հայաստանից եկած և գործով զբաղող մարդիկ էին դրանք։

Ի՞նչ ջուրի վրայ են այդ կողմերի Հայերն։ Եթէ Ցանձնաժողովի քննութենէն յաջող ելք չլինի (և ես շատ յոյս չեմ դներ այդ մասին), ի՞նչպիտի անեն հայրենասէրներն։ Դա՞րձեալ կը սպասեն որ ձախող դէպքերն իրենք չուարա՞ծ գըտնեն։ Հաճեցէք ընդունիլ սիրոյ ողջոյնս։

ՍԱՆԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Տիար Վարժապետեան Ուօշինկթընի Թայմզին մէջ ուժգին յօդուածով մի նշաւակեր է զ«Սուլթան Համիտ բռնաւոր»։

ՆԱՄԱԿ Ի ՖԻԼԱՏԷԼՖԻԱՅ

Ֆիլատէլֆիա, Ապրիլ 8, 1895

Տէր Խմբագիր,

Ազգօգուտ լրագրոյդ մէջ Անկլօ-Արմէնեան ընկերութեան մի շրջաբերականի հրատարակութիւնը կարդալով՝ տեղւոյս երիտասարդներէ ոմանք նկատելով նրա կարեւորութիւնը, Մարտ 3ի կիրակի օրն, կանխաւ ազդարարութեամբ մը, ի Մօրնինկ Սթար Հօլ բաւական թուով ազգայնոց ներկայութեամբ ժողով մ'ունեցան։ Ժողովը՝ որու նպատակը բաց որոշ էր, առանց նախագահի և ատենադրութեան ըսկսաւ, ի ներկայից յարգելի, ամենէն հասակաւոր մի անձի սա հետեւեալ պարզ և ընտանի խօսքերով։ «Հոս եկած եմք ստակ ժողվել և ղրկել Անկլօ-Արմէնեան ծանօթ ընկերութեան, որու գործունէութիւնը դէպի մեր ազգ ամենուս ծանօթ է։ Ինչպէս Տաճկին առքէր պէտէլի կուտայինք որու զօրքերը կերակրուելով մեր փարայով աւելի կը զօրանային բռնանալ մեր պատուոյ և ընչից, պէտք է աւելի ուրախութեամբ տալ այդ միութեան որ պիտի պաշտպանէ զմեզ նոցա ասպատակութեանց դէմ։» Կարդացուեցաւ շրջաբերականը, ճառախօսութիւն և այլն չեղաւ և ի՞նչ պէտք. խնդիրն՝ պարզ, օգուտն՝ շօշափելի ամենէն անուս և տգէտ անձի իսկ, որ կուսակցական նեղ շրջանակի մէջ չապրիր։ Ուրախալի էր որ ներկայից մեծամասնութիւնը համակրանօք վերաբերուեցաւ դէպ ի հանգանակութիւն որ մինչ թէեւ կը շարունակուի նոյն օրուայ ներկայից կողմէ ընտրուած երեք անձերէ բաղկացեալ մասնաժողովոյ մը միջոցաւ, ի լրոյ կը տեղեկանամք թէ չնայելով տեղւոյս ազգայնոց փոքր թուոյն որը 150ը չանցնիր յուսացուածէն աւելի գումար մը պիտի գոյանայ, որ ի վերջոյ կը տեղեկագրեմք Ձեզ։

Ուրախալի է տեսնել մեր Ամերիկաբնակ Հնչակեան ազնիւ եղբարց հայրենասիրական անկեղծ զգացմունքը որով ջանադիր եղած են հետազօտել իրենց կուսակցապետի արարք և վար առնել նրա դիմակ. ասով պիտի կարենան ջնջել մեր Ազգի ճակատի սև գիծը. ապրին անոնք որք ազգի շահը կը նախընտրեն քան արհամարհելի եսամոլութիւնը։ Հ.

ՆԱՄԱԿ ՇԻՐԱԿՈՅԻՆ

Շիքակոյ, 11 Ապրիլ, 1895

Ուրախ ենք յիշել թէ շատեր հասկացած են միութեան հարկն և քաջալերական պատասխաններ ալ տուած են փափաք յայտնելով փութացնել կեդրոնի մի գումարումն, և յոյս մեծ ունիմք թէ վաղ ընդ փոյթ պիտի լինի ժողովը։ Սակայն կը ցաւինք նաև յիշել թէ այն տեղեր, որ կեդրոն լինելու յարմարութիւն ունին (հոս պարտիմք դարձեալ կրկնել թէ մենք բնաւ չեմք կարծեր Շիքակոյ կեդրոն ընել ինչպէս որ ոմանք այդ սխալ գաղափար առեր են) շատ անտարբեր գտնուած են և իրենց ուշադրութիւն չեն դարձուցած այս ամենակարեւոր և կենսական կետին վերայ։ Բարեկա՛մներ, մենք այսօր այնպիսի պատեհութիւն մ՚ունիմք որ դարերու ընթացքի մէջ հազիւ կը պատահի, և եթէ այս առիթէն չօգտուինք, վա՛յ մեզի։ Ազգը ծննդաբերութեան ցաւ կը կրէ, կա՛մ իւր ցաւին մէջ պիտի վախճանի և կա՛մ զաւակ ծնանելով յաւիտեան պիտի ապրի։ Ո՞ւր են նորա վարպետ բժիշկներն, որ այս ահաւոր ճգնաժամին չեն գար իրարու մօտ և տառապեալ Մօր մօտ։ Ժամը ահաւոր և անդառնալի է, միատեղ գործելն անհրաժեշտ պէտք, ուրեմն առաջնորդներու պատասխանատուութիւնն կարի մեծ է։ Թող փութան հայրենասէրներն յայտնել թէ ժողովը ո՞ւր և ե՞րբ կրնայ ըլլալ, իսկ անոնք որ կ՚ուզեն հասկանալ այս մասին թող հաճին ուղղել իրենց գրութիւններն

Թ. Պ. ԽՆԿԵԱՆ
81 Ashland Boul, CHICAGO. Ill.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԴ

Ներկայիս պատիւ ունինք ծանուցանել Յարգոյ ազգային և ոչ ազգային բանասիրաց՝ թէ լոյս տեսաւ Միսբանութեանս տպարանէն բազմահմուտ և հանրածանօթ Հայր Ղեւոնդ Վրդ. Մ. Ալիշանի մի նոր երկասիրութիւնը,

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՅՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ»

համառօտ խորագրով՝ բայց հմտալից և ճոխ պարունակութեամբ ընտիր երկ մի։ Ուշիմ ընթերցողք պիտի տեսնեն այս խորագրիս ներքև 3400էն աւելի հայ և հայացեալ բուսեղինաց ծանօթ և մեծաւ մասամբ անծանօթ անուններ, ամեն բուսոց առանձին նկարագիրն, ըստ տեսակին և ըստ ձեւոյն, ըստ բժշկական օգտակարութեան և երբեմն նաև ոմանց՝ (ըստ աւանդական գրուածոց) դիցաբանական առասպելքն և այլն, և այլն։ Ամբողջ կազմուած է 44 ութածալ թերթերէ (698 երես), 150ի չափ բուսոց ձեւերով։

Գինն է անհրաժեշտ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՄԱՄԲ ճանապարհածախսով ի միասին՝ Թուրքիոյ համար ոսկեդրամ 8 փռ. — իսկ Ռուսաստանի համար 3 ռուբլի։

Ստանալ ցանկացողք կրնան դիմել հեռեւեալ մեր սովորական հասցէին

DIRECTION
DE L'IMPRIMERIE ARMENIENNE
VENISE, St. LAZARE

Վենետիկ, Ս. Ղազար 1895

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱՏԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՒ

Լոնտոն Ապրիլ 15.—Տիար Կլատսթոն, Հայկական Ցանձնախմբի մէկ պատգամաւորութիւնն այսօր ի Հավարտըն ընդունելով՝ հանդերձ մի քանի հայ փախստականօք, հաւասաց զնոսա իւր խորին համակրութեան վերայ։ Հայկական կացութեան ներկայ վտանգն էր, ասաց, որ օգտակար գործողութիւնն յապաղի կամ լքուի քանի որ Թուրքն բարեկարգութիւններ գործադրելու խոստում կ՚անէ։ Տիար Կլատսթոն իւր դիտողութիւններն սա խօսքով վերջացուց։ «Ամեն ինչ որ կարող եմ անել ձեր ապերջանիկ երկրին համար, ուրախութեամբ պիտի անեմ միշտ, սակայն պէտք է յիշէք թէ ես զառամեալ եմ և հանրային կեանքէ քաշուած։»

Հեռագիր մի կ՚ասէ թէ Անգլիական, Ֆռանսական և Ռուսական դեսպանք Սուլթանին հետ բանակցութիւններ ունեցած են, և զնա նպաստաւոր գտած են մի դեսպանախորհուրդ կազմելու Քրիստոնեայ Ցանձնաժողովոյն տեղեկագրին մատուցմանէն անմիջապէս յետոյ։

Տէյլի Նիւզի թղթակիցն Օտէսայէն կը հեռագրէ թէ Հարաւային Ռուսիոյ թերթից մին կը պնդէ թէ Ցարդին ճըշմարտութիւնն ստուգելու աղդուագոյն եղանակն կը լինի գաւառին ժամանակաւոր գրաւումն Ռուսիոյ կողմէն՝ քննութեան ժամանակամիջոցին։

Միացեալ Նահանգաց կառավարութիւնն Ապրիլ 4ին հեռագրական հրաման յղեց ծովապետ Քիրքլէնտի, որ ի Փալէռմ (Սիկիլիա) կը գտնուէր, դիմել անմիջապէս ի Զմիւռնիա, Ամերիկեան քաղաքացիներն պաշտպանելու համար Թուրքիոյ մէջ, երբ քրիստոնեաներն կոտորելու ոևէ վտանգ սեռնուի։

Անգլիոյ Պէրմինկհէմ քաղաքի Ազատական ընկերութեան «Զորս Հարիւրոց» ժողով մ'եղած է «նկատելու Անգլիոյ պարտաւորութիւնն հանդէպ Հայաստանի և կառավարութեան ձեռքն զօրացունելու ի սանձահարել աղդուապէս թրքական զեղծ կառավարութիւնն։»

ՏԷՑԼԻ ՆԻՒԶԻ ՈՒԺԳԻՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆ։ Ազատական մեծ թերթն իւր թղթակցի ահաւոր մէկ նոր տեղեկագրութիւնն հրատարակելու առթիւ կը գրէ մի հզօր խմբագրական, զոր կը վերջացունէ հետեւեալ տողերով.

«Ցարդի տասնեհինգ դիշերներ անցան այս բոլորովին անդիմադիր ժողովրդոց վերայէն նախ քան մարդասպանից բարեհաճիլն ոչ ևս հարուածել։ Պէտք է պարզօրէն խոստովանիմք թէ, ըստ մեր դատողութեան, պատմութիւնն, որպէս կը դրուի մեր առջեւ, ի վեր է քան ամենայն հնարաւորութիւն մեկնաբանութեան։ Ոևէ բան չի կրնար աւելցուիլ որ աւելորդ չլինի։ Մերկ իրողութիւններն իրենց բնական և անխուսափելի ազդեցութիւնն պիտի ունենան ի վերայ որոշմանց ամենանոց որք պատասխանատու են մեր յարաբերութեանց համար այն Տէրութեան հետ որ կատարեալ ուրացումն է Աստուծոյ։»

ԹԱՑՄԶ, լրագիրներու թագաւորն, նոյնպէս ուժգին խմբագրական մի կը նուիրէ յոյժ երկար տեղեկագրութիւն մի իւր յատուկ թղթակցէն հրատարակելու առթիւ։ Ահաւասիկ այդ նշանաւոր խմբագրականի մի քանի տողերն.

«Կրնան մեզ ասել թէ իւր իսկ (մեր թղթակցի) ասից համեմատ՝ Սասնոյ Հայք հեզ և անդիմադիր զոհեր չեն բռնապետութեան, այլ ընդհակառակն նոքա ֆուրդ ասպատակաց դէմ անձնապաշտպան եղած են։ Բայց և այնպէս ինչ ալոր ասել կարելի լինի այս մրցմանց մասին, դէպքերու դէզ մի կը մնայ յապացոյց թուրք իշխանութեանց դիւաչունչ անգթութեան և բռնութեան զորս կառավարելոց կողմանէ ոևէ սխալ վարմունք չեն կրնար չքմեղել։ Հարկ չկայ աստ բովանդակութիւնն տալ այդ սիրտ խառնող մանրամասնութեանց, կամ չեշտել գործուած ժանտութեանց ոևէ միոյն վիթխարի հանդամանքն։ ... Ակն յանդիման կը մնայ իրողութիւնն թէ թուրք կառավարութեան զօրքն, փոխանակ (ըստ իւր պատրուակի) արդարութիւն ի գործ դնելու և տրոց հաւաքման համար ոյժ գործածելու, թոյլտուութիւն և քաջալեր ստացան ասպատակել գաւառն ըստ եղանակի հինից և աւազակաց։ Այդ է ահա ամբաստանութիւնն որ անպատասխանի կը մնայ և՝ որքան մեք կը տեսնեմք՝ պիտի մնայ անպատասխանի՝ ինչքան զեղջ ալ որ լինի ստանալի ապացոյցներէն զոր կարենայ թելադրել թրքային ամենաջերմ փաստարան մի։ Այդ դատավճիռն շատ աւելի հեռուն կը հասնի քան զտեղական պաշտօնեայս և վարչական գայթակղութիւնս, և կը պաշարէ թրքական կառավարութեան ամբողջ դրութիւնն։»

Վեհ. Կաթողիկոսն կը շարունակէ իւր հովուական շրջագայութիւնն Ռուսիոյ Հայ գաղթականութեանց մէջ, և իւրաքանչիւր հասարակութեան կը ներշնչէ խրախոյս և ազգային ոգեւորութիւն։ Հաւանական է անցնի Մոսկուա և անտի ի Բեդերպուրկ։

Փրոֆ. Զերազ Ֆռանսայի մի քանի կարեւոր կեդրոններն այցելելով Հայոց վերայ բանախօսեր է, ջերմ ընդունելութիւն գտնելով ի Ֆռանսացւոց։

Փրոֆ. Թումայեան Անգլիական լրագրաց մէջ բացատրած է թէ ինչպէս Թուրքերն Հայոց յառաջդիմութեան չարակնելով սկսած են վերջին տարիներս ճնշել

զնոսա այն պատրուակաւ թէ նորա տրամադիր են ապստամբելու։

Թղթակցի մի տեսակցութիւնն ընդ Վեհ. Կաթողիկոսին կը պատմուի Թայմզի մէջ։ Ամենայն Հայոց Հայրիկն յուսահատ չէ Հայկ. Խնդրոյն մօտաւոր լուծումէն։ Թղթակիցն իմացած կը լինի թէ Ս. Կաթողիկոսն դիտաւորութիւն ունի խնդրել Ռուս կառավարութենէն կտոր մի երկիր չնորհել Արարատի մօտակայքն՝ փախստականՀայոց գաղթականութիւն մի հաստատելու համար։ Այս ծրագիր հաճելի է, կ'ասէ, բոլոր Հայոց բաց յանցանէ որք հետամուտ են հայկական անկախութեան և թագաւորի կամ նախագահի մի ընտրութեան Հայաստանի համար։

Հարթ Ֆըրթէն կը գրեն մեզ.

Ուրախ ենք ըսելու որ Հարթ Ֆըրթու մէջ գտնուող 20 հայերէն 15 ազգասէրներ Մարտ 9ին ընկերութիւն մը կազմեցինք այն նպատակաւ որ հայ ազգին օգտին աշխատինք։ Կը յուսանք թէ միւսներն ալ մեզի հետ պիտի միանան։

Ց. Կ. Մ.

Ուսաբրի «Տէյլի Թէլէկրաֆն» երկարօրէն կը նկարագրէ Հայոց Զատկի կիրակէին ժողովներն ի քաղաքին։ Նախ կը պատմէ թէ «բժիշկ Մ. Ս. Գաբրիէլեան, Նիու Եորքցի, խօսեցաւ Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովասրահին մէջ։» Եւ կը յաւելու Նորա ատենախօսութեան գլխաւոր իմաստներն գրեթէ անսխալ։ ապա կը յիշէ երկու ուրիշ ատենախօսներն, ու կ'անցնի Հնչակեանց ժողովն ևս պատմել որ նոյն երեկոյին տեղի ունեցած էր ուրիշ սրահի մի մէջ։ Ի վերջ յօդուածին դարձեալ կը տեղեկագրէ Թղթակիցն զիւր տեսակցութիւն ՀԱՅՐի խմբագրին հետ։

Ուսաբրէն կը հեռագրեն Նիու Եորք «Թրիպիուն»ին. «ԾՐԱԳԻՐ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ,— Տր. Մ. Ս. Գաբրիէլեան, Հայոց մէկ ժողովոյն մէջ ի քաղաքիս, ներկայացուց ծրագիր մի բոլոր աշխարհի հայ գաղթականութեանց միջազգային միութեան, կեդրոնական վարչութեամբ մ'ի Լոնտոն, որ ուղղութիւն տայ հայ ժողովրդի ազգային գոյութեան վերաբերեալ բոլոր գործոց։ Ամերիկայի Հայոց ազգային համաժողով մ'անել և անդ երեսփոխաններ ընտրել ընդհանրական մի համաժողովի համար յԵրուսաղէմ՝ էր ատենախօսին առաջարկն, որուն ի նպաստ բովանդակ ժողովն քուէ տուաւ։» Սրահն լի էր, և ոչ սակաւք, ի չգոյէ տեղւոյ, ոտքի վերայ կեցած էին։

ՀԱՅՐի բաժանորդագներն վճարելու մասին անկանոնութիւնն կատարեալ է։ Երբեմն բարեյօժար ազգային մի հեռաւոր երկրէ մի մեզ կը յղէ բաժանորդաց ցանկ մի, և կը խնդրէ որ թերթ յղեմք նոցա, վստահացուցանելով զխմբագրութիւնս թէ բաժնեգներն անյապաղ գանձելով պիտի փոխանցէ։ Այս կերպով մեք տարի մի Գահիրէ յղեցինք 25 անձանց, որոց մէկ կամ երկուքն հազիւ վճարեցին։ Ուրիշ երկիրներ ալ տարի մի և աւելի կը յղեմք թերթ, և օր մ'ալ նամակ մի կը ստանամք ծանուցանելու թէ այսինչն տարիէ մ'ի վեր անկէ մեկնած է, և այնինչն թերթն կանոնաւորապէս չէ ստացած։ Խմբագրութիւնս մեծ հոգ կը տանի ամեն կանոնաւոր բաժանորդի յղել թերթն կանոնաւորապէս, թէև մեծ հեռաւորութեան պատճառաւ կրնան երբեմն վրիպիլ հասնելէ. իսկ այն անձանց որոնցմէ դրամ և լուր չեմք ստանար շատ երկար ժամանակ, և վստահ չեմք թէ առաջին տեղէն մեկնած չեն, ի հարկէ նոյնքան կանոնաւորութեամբ թերթ յղելու կը թուլանամք։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Լոնտոն Ապրիլ 16.—Տէյլի Թելէկրաֆին կը հեռագրեն թէ Կարնոյ Հայք Ապրիլ 2ի գիշերն ահարեկեալ էին ի լուր այն տեղեկութեան թէ 100 թուրք զինուորներ փորձեր էին զօրանոցէն խոյս տալ և քրիստոնեաներն կոտորելու սկսիլ։ Տեղեկութիւնն ճշմարիտ էր, և կոտորած մի խափանուեցաւ գործողութեամբ պահապան զօրաց հրամանատար Շահապ փաշայի, որ, ի տես խուժման առաջին նշանին, հրաման տուաւ զօրացն ետ դառնալ իսկոյն իրենց զօրանոցներն։ Զանազատին հրամանին, յայնժամ Շահապ հրամայեց հնազանդ մնացած զօրաց կրակ արձակել, և հեստող զօրաց 13ն գնդակահար սատակեցան։ Գաւառին մէկ ծայրէն ցմիւսն նախազգուշական միջոցներ ձեռք առնուած են կոտորած մի խափանելու, բայց անապահովութեան զգացումն կը տիրէ։

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեա նը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-ֆիսին Station E (*Եդ ճիւղ*)*ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինի մեզ։*

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ կրնայ գնուիլ թղթակազմն 60 սէնթի, լաթակազմն մէկ տոլարի, բուն հրատարակչէն, և կամ, ի մեծագոյն դիւրիւթիւն մեր հայրենակցաց, մեր ազգային Տոքթոր Այվազեանի դիմել, սապէս։—

Dr. A. Ayvazian
424 West 57th St., New York, N. Y.

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգինն է 5 տոլար հասցէն է "խմբագրութիւն Մշակի"(MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա։ ԱՐՁԱԳԱՆՔԻ ևս պայմանն ու հասցէն նոյն է։

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ և ԲԱԶՄԱՎԷՊ։ Տարեկան բաժնեգին իւրաքանչիւրին է 2 տոլար։

ԲԱԶԽԱՎԷՊի հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑի հասցէն է,
Redaction du HANTES,
Convent Mechihariste.
VIENNE, AUTRICHE

ԼՍՈՒՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻՈՅ բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ. հասցէն է—
33 De vere Gardens W, LONDON, ENG.

«ԱՐԱ»ի Տարեկան բաժնեգինն է երկու տոլար։
Հասցէն է։ Editor of ARA,
Chogda, Bengal, INDIA.

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետևեալ գներով։
Ա։ տարի, 1 *տոլար* 50 *սէնթ կամ* 7·5 *Ֆր։*
Բ։ ,, 2 ,, *կամ* 10 *Ֆրանք։*
Գ։ ,, 2 ,, ,, ,, ,,



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵՆՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան։ լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և չատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

Բաւական թուով Պոլսոյ շէնքերու ֆոթոկրաֆիներ ունիմ, իւրաքանչիւրն 30 սէնթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ գնով գրել հետեւեալ հասցէին.

H. K. Samuelian
8 Grant AVE.
AUBURN N. Y.

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)
Bet. 16th and 17th Sts., NEW YORK.
ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԱՇԱԿԱՅԻ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

NEUMANN BROTHERS
Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
5 և 7 E. 10դ Փողոց
5դ Էվիւնիւի մօտ
Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր.

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ
286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջն
Դեղագրեր կը շինուին խնամով

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցուցնելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։ Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հարընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ